

ԺԱՄԱԿԱԿ

ԳԱՆԴԷՍ ԳԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

12 ՀՈՎՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ 1863

ԹԻՒ 21

Այս հրատարակութիւնը երկու շաբաթը անգամ իւր շաբաթը օրերը :
 Բնագործարարութեան գինը ստեղծելու Յ արծաթ Մէճիսիէն Կանխի :
 Մէճիսիէն 4 շրու :
 Դուրս ելեալէս լրագրոց ճամբու ծախսը անուղիմ լրաց է :
 Ստորագրութեան անուշիկ թուան կըստի :
 Ստորագրութեան պէտք է Մէճիսիսիէն ստորագրել :

Դուրս ելեալէս Գործարարութեան էն .
 ՉՄԻՆՈՒՄ . Գործարար արդար Գործարարութեան :
 ՆԵՎՈՒՄ . Յանրէ արդար Կարգաւարտութեան :
 ՏՐԵՎԻՍ . Կարգաւարտ արդար Կարգաւարտ :
 ԿԵՅԿԵ . Համբարձում արդար Գ. Արեւմտական :

ԿԵՆՍՍԵՎՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՉՃԵԱՆ ԸՕԳԵՅԻՆ ԸՆՉՈՒԳԵԿԱՆ ԲԱՐԵՐԱՐԻ

ԳԼՈՒԽ ԺԷ

ՎԱՌՕՐԱԳԵՏ ԵՒ ՃԱՐՏԱՐԱԳԵՏ ԱՄԻՐԱՅԻՑ ՄԱՆԸ :
 ՏԱՆԿ ԸՆԲԱՏԱՅ ՀԱՄԱՐ ՈՂՈՐՈՒԹԵԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ
 ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ : ԵԿԵՆԵՏԵԱՅ ԵԿԱՄՏԻՑ ԱԶԱ
 ՏՈՒԹՈՒՆԸ ՅԱՐԵՎՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՄԱՆԵՆ :

Արքունի Վառօղարարական մեծահասակաւ Տաւ
 աեան Սիմէոն Վսիւրան 1832 մարտ 12 ին վախ
 ճանեցաւ , և մեծահանդէս յաղարկաւ որով
 թեանք թաղաւեցաւ ի Վեչիկիթաշ :

Նոյն տարւոյն մէջ վախճանեցաւ նաև Ար
 քունի ճարտարապետ բարեպաշտօն Պալեան
 Գրիգոր Վսիւրան , և մեծաշուք հանդիսիւ
 թաղաւեցաւ յԷսիկաւտար :

Այս երկու բազմերախտ Վսիւրաները Հա
 յոյ Ազգին երկեղի պարծանք էին , թէ իրենց
 հաւատարիմ ծառայութեամբը և վարկովը
 առաջի Բ. Դրան , և թէ Ազգիս վրայ ունե
 ցած բազմաթիւ երախտիքներովնին :

Արքունի վառօղարարական թեան և ճարտա
 րապետութեան պաշտօնները հանգուցեալ
 բարեխիշտակ ամիրայից հանձարոյն և գոր
 ծունեութեան սեպհակահաւաճ ըլլալով , ա
 նանց վախճանէն ետքը , հնրիկաւ նոյն պաշտօն
 ները դարձեալ անանց որդւոցը պիտի սեպհա

կանուէին : Բայց շատեր եղան և մանաւանդ
 օտարազգի անձինք , որ ընծաներու և կա
 շառքի միջոցաւ մեծ ձիգ թափեցին այս եր
 կու արքունական պաշտօնները գրաւելու ,
 շորհիւ մեծ սպարապետ խիւսրէվ բաշայի և
 ուրիշ նախարարաց : Եթէ այս յաջողէր , յայտ
 նի կ'երեար թէ որչափ մաս և ցաւ պիտի
 պատճառէր մեր Ազգին :

Սակայն Վեչճեան այս մասին ալ իր արե
 ութիւնը և ազգասիրութիւնը ցուցուց : Ա
 ճարարեց և իրեն կանչեց Սիմէոն ամիրայի
 որդին Պօղոս , և ասոր հօրեղբայրը Յովհան
 նէս Տաւեան . և դանտը երկուքն ալ Սուր
 թանին ներկայացնելով , խնդրեց որ հանգու
 ցեալ Սիմէոն հաւատարիմ ծառային Վառօ
 դարարական պաշտօնը անոր որդւոյն և
 եղբորը յանձնելու շորհն ընէ : Սուրթանին
 հրամանաւը յատուկ հրովարտակով Պօղոս
 Այի Սաէֆանոյի վառօղարանին և անոր հօր
 եղբայրը Յովհաննէս Ազատըյի վառօղարա
 նին վառօղարար կարգեցան :

Վեչճեան նոյնպէս ճարտարապետ Գրի
 գոր Վսիւրայի որդին կարապետ ներկայացուց
 Սուրթանին , որ իւր բարձր հրովարտակով
 ճարտարապետ կարգեց զայն արքունի շինու
 ճոց , անոր օգնական տարով քեռայրը Յով

հաննէս Սերլէրեան, որ ազգասէր, ուսումնասէր և բարեպաշտ անձ մ'էր:

Ուրախացան ճարտարապետ և վառօդապետ ամիրայից գերդաստանները, և իրենց հետ բոլոր Ազգը՝ ըստ որում այն երկու գերդաստանները հաւատարիմ ծառայք էին Սուլթանին, և բարեսէր խնամարկւածք Ազգին և պարծանք: Վառօդապետ Պօզուս և Յովհաննէս ամիրաները, նոյնպէս ճարտարապետ կարապետ ամիրան ժառանգելով իրենց ծնողաց պաշտօնները, որ ըստ օրէ սկսան պայծառանալ, յառաջագիմել, և օգտակար ըլլալ թէ բարեխնամ կառավարութեան և թէ իրենց սիրելի Ազգին:

Պէզճեան այսպէս Ազգին երկու երևելի գերդաստանները վստահեցնելով, զանոնք Ազգին պարծանք և մխիթարութիւն նուիրելու ծառայութեանը մէջ, Ազգին աղքատ ընտանիքներն ալ հոգայէ չէրգազրած, զանոնք այն կարեկցութեան, գծայ և ինտանց արժանի ընտանիքները սրանք գործել ոչ կարեն, մեւրանալ ամաչեն, գննէ ամուսկանն պատասով մը մխիթարել չըրանալով, ժողով գումարեց Ազգային Պատրիարքարանի մէջ, խորհրդի կանչելով բոլոր իշխանաւորները, արհեստաւորաց գլխաւորները, և յորդորեց զանոնք օգնութեան ձեռք կարկառելու անանկ աղքատաց վրայ: Օրինակով մը աւելի զգայուն ըլլաւ իր յորդորը. ըսաւ Պէզճեան. « ամուսուան երկար որ մը առտու ընէ մինչև երեկոյ անօթի մնացած ունիմ, առանց փող մ'անգամ ունենալու, որ հաց մը գնելով՝ ուտէի, և իմ անօթութիւնս անցընէի. այս բանս արդի վիճակիս մէջ բոլորովն սուտ և երազ կը թուի ինձ: Հիմա իմքսակիս մէջ 4-5 դահեկան ունիմ, բայց դիտցէք եղբայրներ, որ այս ալ սուտ և երազ է, վասն զի այսօր կայ, սակայն կարելի է որ վաղը չըլլայ, կարելի է որ գարձեալ մէկ փողի մը կարօտ ըլլամ. ասոր տարակոյտ չեկայ, վասն զի շատ օրինակներ ունինք մեր աչաց առջև: Վերեմն պէտք չէ որ մեր հարստութեան տարախնինք, կրնայ ըլլալ որ մէկ ժամու մէջ բոլոր մեր ունեցածը կորսնցնենք, այլ գիտնանք որ մեր ունեցածը Աստուծոյ պարգևն է, և Աստուած կը կամի որ մենք մեր վայելքներով յղիտացած ատեն, աւուր հացի կարօտ աղքատները մոռնանք, և մենք որ այսօր կարող վիճակի մէջ ենք, անկարող անձերը խնամարկել չիտե՞նք: Եթէ կը հաւատանք որ աշխարհի ճոխութիւնները ու փառքը վաղանցիկ և գիւրտփախի են, ուրեմն մենք ալ անանց չվստահինք, այլ աւելի Աստուծոյ գթութեանը վրայ մեր յայտը դը-

րած, անոր սղորմութեանը համար գոհանալով, մեր ձեռքէն եկած օգնութիւնն ընենք կարօտելոյ, դուցէ որ մ'ալ մենք այն կարօտելոյ կարգն անցնինք, և ուրեքն նոյն օգնութիւնը անստելու և սպասելու կարօտ ըլլանք: »

Պէզճեանի լոկ ներկայութիւնը, և գործի մը առաջնորդ ըլլալը բուռնան էին ասանկ ու ասոր նման շատ երևելի գործեր յառաջ տանելու. սակայն այնպիսի բարեպաշտական գործի մը ձեռնարկութեանը համար երբ յարգար ալ մտայց, և իր նախկին կարօտ և նոյն միջոցին անկարօտ վիճակին մէջ գոյցածը ամենուէն աչքին առջև դրաւ, ի հարկէ բոլոր ներկոյ եղբայրներն իր խօսքին համագած կը գրաւորէր:

Աստի բնիկներ սահմանուեցան Պօյսոյ իւրաքանչիւր թաղերու համար, որպէսզի ուղործութեան արժանի կարօտեալները բնուէին և արձանագրուին:

Քննութիւններն ու արձանագրութիւններն եղան, և երկու կարգի բաժնուեցան կարօտեալները, մէկ մասն անտէր էին որ ուսուր հացի կարօտ էին, և միւս մասն անտէր որ թէպէտ աւուր հացը հայթայթել կրնային, սակայն հանգերձէ և ուրիշ պիտայքներէ զրուր կը ած էին:

Յաջորդ շաբթուէն վերասին գումարեցաւ ժողովը, և որոշուեցաւ առաջին կարգի կարօտելոյ համար ամեն ամիս հինգական՝ դահեկան ապր մարդ գլուխ, և երկրորդ կարգի կարօտելոյ համար Օնոււնգի և Օտակի օրերուն մէջ մարդ գլուխ տասնէ հինգական դահեկան ապր: Այս համար ալ Տնակայ Սիւրի մը սահմանուեցաւ Պատրիարքարանի մէջ, և պէտք եղած դանձապետներն ու համարակալները կարգուեցան: Ամէն մէկ արհեստաւորներէ ալ տարեկան սուրբէր սահմանուեցան, իւրաքանչիւրէն՝ իր կարողութեան չափով: Ինքն Պէզճեան տասը հազար դահեկան զըրուեցաւ և նոյն ժամայն բերել տուաւ, իրեն հեռուեցան ուրիշներ ալ: Արօշուեցաւ որ ուրիշ տեղերու և գիւղերու աղքատներն ալ իւրաքանչիւրն իր գիւղին բնակիչներէն խնամարկուի, և եթէ պակտելու ըլլայ արուելիք ամուսկան սղորմութիւնը, պակտածը Տնակայ Սիւրեկի գանձապետէն առնուի անոնց եկեղեցւոյն վերատեսչին ստորագրութեամբը:

1 Այս ամուսկան նուէրները նոյն ժամանակի ամուսկանները նոյն ժամանակէն ինչպէս որ բերաւ որ չըրութեանը կ'օրհնէին այս սղորմութեան ամուսկան հաստատութեանը պատճառ եղողը, եթէ արդէ այս հոգան գըրուել նըւէրն ալ ժամանակին սղորմութեանը հետ բարձրացաւ, մինչև բուրովն վերջուեցաւ հիմա

Պէզճեանի պահանջները որոշելու համար անհրաժեշտ էր որ ինչ նշանակաւոր մեծագործութիւն մ'ալ, ոչ միայն Հայոց, այլ և Յունաց և Հրեից համար անդամ:

Թահիր էֆէնի անուն նախարար մը Լ. Չ. գաֆ Նալբէ անունեցաւ 1832 ին: Ընկա Սուլթանին համաթեամբը ու գեց հպատակ ազգաց Կիւղեցեաց, Լ. թուոց և փանորկից եկամուտները արբուսի գանձը գրաւել. ուստի հրաման իրկեց Հայոց, Յունաց և Հրեից, որ իւրաքանչիւր իր Կիւղեցեաց, Լ. թուոց, փանորկից, հիւանդանոցաց եկամուտներուն տուժարը Լ. Չ. բաժնը իրկու փաւթոց:

Բոլոր հպատակ ազգերը ցաւեցան այս լըրոյն վրայ. և ամենքն ալ այս ազգական ազատեցաւ անխնայութիւններն մի միայն Հայոց Կիւղեցի վրայ դրած էին, յուսարով որ Պէզճեանի հորն ազգեցութեամբը այս ազգախումբը տուժուի: Բանի մ'որէն արբուսական պալատը գնաց Պէզճեան, մարտը կանխել մը ձեռքն առած. և որահին մէջ Սուլթանին սենեակին բով կը կանգնի, աչքը կանխելին վրայ: Սուլթանը դուրս կ'ելնէ սենեակէն. և Պէզճեանը անսնելով, կը հարցնէ անոր թէ ինչ է իւր ձեռքերը: Երկրպագութիւն կ'ընէ Պէզճեան և կ'ըսէ. Տէր արքայ, սուրբն Յիսուս և սրբուհի մայր նորա Սարգիս, իր քեցի Եկեղեցւոյն մէջ փաւթու իւր չունենալով, այս կանխելը առ Սեւադոր Տէրութիւն ձեր իրկեցին, որ իւր խնդրեն ձեր վեհախառութենէն:

Սուլթանը ետ դարձուց իր նախկին հրամանը, և Բ. Գուսըր հրաման իրկեց, որ կայսերական հրովարտակ տրուի ի հաստատութիւն ամենայն եկամտից Եկեղեցեաց, փանորկից հպատակ ազգաց, ինչպէս որ մինչև անասեն էր, այնպէս մնայ միշտ և անփոփոխ:

Հրովարտակը եկաւ նաև մեր Ազգային Պատրիարքարանը, մեծ ժողով եղաւ. և կարգադրու Կաթիկոսոս Կիւղեցեաց բեմն ելնելով, սրանչէի ատենաբանութիւն մ'ըրաւ. բնաբան դնելով Սաղմոսին սախօրը. ի Տեառնէ եղև այս, և է սրանչէի առաջն աչաց մերոց. և մեծ ուրախութեամբ բարեմաղթութիւններ ըրաւ փան կենաց Սուլթանին և բարգաւաճման կայսերութեան նորին, և փան Պէզճեան Ազգային Կիւղեցեաց Կարերարի, որ ոչ միայն իր Ազգին սիւն ամբողջութեան և ապաւինի էր, այլ բոլոր հպատակ ազգաց իսկ, որով և անձեան պարծանք Ազգիս բոլոր ազգաց առջև:

Ըրբ-նախելի:

Կրօնական ժողովն անցեալ երկուշաբթի սեպտ. 30 իր առաջին նիստն ըրաւ, Ազգային Պատրիարքարանին մէջ, և իւր գիւանը կազմեց.

Ներսէս Կաթիկոսոս, Կաթիկոսի
Տ. Յովհաննէս Փափաղեան, Գրիգորի Կաթիկոսի

Տ. Երիտասկէս Սամաթիոյ, Կաթիկոսի
Տ. Սահակ Օրթագիւղի, Գրիգորի Կաթիկոսի:

Քաղաքական ժողովն ալ նոյն օրը գումարեցաւ, բայց մեծագոյն մաս չգանելով, չըրցաւ իր գիւանը կազմել:

Քաղաքական ժողովը անգամներէն հրաժարական աւաղներ ըլլալով, անցեալ հինգշաբթի, հոկտ. 3, Ազգային Կրթութեամբն Մեծահանուր Ժողով հրաւիրուեցան, բայց հան ալ մեծագոյն մաս ներկայ չգանուելով, ատենան ջրացուեցաւ: Սակայն և այնպէս ներկայ գտնուելու յօժարող Կրթութեամբն Սահակ Նալբէ Կրթութեամբը համոզել. և ուրախութեամբ կ'ըսենք որ անոնց ջանքը ապարդիւն չէրաւ, փան զի երկուշաբթի, հոկտ. 7, Քաղաքական Ժողովը իր առաջին նիստն ըրաւ, և մեծագոյն մասն ներկայութեամբ ատենար բացաւ, և գիւանը կազմեց այսպէս,

Կրօնական Ստեփան Պէյ Կաթիկոսի
Տատեան Ներսէս էֆէնի Գրիգորի Կաթիկոսի
Կրճիկեան Կարանիկ Պէյ Կաթիկոսի
Հետոյ Կրօնական Համագումար ժողովը պատրաստած Պատրիարքութեան ցանկին վերայ հինգ ընտրելեաց ցանկը պատրաստեց Քաղաքական ժողովը: Այս հինգ ընտրելեաց ցանկը հետեւեալ կերպով գիւանը ի վրայ.

1. Պօղոս Կաթիկոսոս Օմիւսիոյ
2. Սիրաիչ Կաթիկոսոս Գաղատիոյ
3. Իգնատիոս Կաթիկոսոս Վանայ
4. Գէորգ Կաթիկոսոս Պրուսայու
5. Ստեփան Կաթիկոսոս Նիխմիդիոյ:

Այս ցանկը պատրաստելէն վերջը սրտուեցաւ յառաջիկայ շաբաթ, այսօրուան համար, Մեծահանուր Ժողով գումարել Պատրիարքի ընտրութեան համար:

Քաղաքական ժողովն իր առաջին նիստովը այս գործերը միայն կրցաւ տեսնել: Ըստնցմով դեռ գործի սկսած չհամարուիր. Պատրիարքը թող ընտրելու վրայ ըլլայ Մեծահանուր Ժողովը, և ընտրուած Պատրիարքն ալ հրաւիրելու պատրաստութիւնը թող տեսնուի մէկ կողմէն: Քաղաքական ժողովը ուրիշ նախնական գլխաւոր պարտքեր ունի կատարելու, հարկաւ իր երկրորդ նիստին արժան կը գտնու փաւթալ նախ Գաւառական Կրթութեամբն ներն ընտրել ապաւ գործողութեանց հսկող և կարգադրող Նոր Գործողիք Յանձնաժողով մը կազմելու:

Երկրորդ Պօրաց Թաղական Խորհրդոց հըրահանք զսկելու, որ իւրաքանչիւր թաղական Խորհուրդ իր թաղին մէջն ազգային ատենախորհրդոց յարմարութիւն ունեցող ազգայնաց ցանկը շինեն և ժողովն իրկեն, որպէս զի անոնց համեմատ ընտրելեաց ցանկ պատրաստելով, Խորհուրդներուն ընտրութիւնները փաւթով կատարուին:

Երրորդ գործեալ Թաղական Խորհրդոց

ծանուցանելու, որ Լրեւսիտանութեան քուէ տուող անձանցմէ անոնք որ դեռ չեն վճարած իրենց թերհաշիւ տալիք 75 դուրուշի տուբքը, հրաւիրուին իրենց պարտքը տալու:

Ըստնյմէ զատ շուտով գործադրելիք են կարեւոր գաւառական գործեր կան երեսի վարայ հինէն մնացած. այն է Սուշի, Վանայ, Խարբերդի գործերը. որոնք կարգի մանկուհամար, ըստ մեզ, առանձին հանձնաժողովներու պէտք ունին, այնպիսի հանձնաժողովներու, որոնք երեքէ աւելի անդամներ չունենան, և անոնք ալ գտնէ ի սէր Ըղբին յառաջիկա ու գործին ակեր ըլլալ սիրող անձինք ըլլան:

Ըստնյ, ու ասոնց նման գործերու շուտով կարգադրութիւնը իրաւունք ունինք սպասելու նորրինոք Բաղաքական Ժողովէն, անոր մեծապատիւ անդամոց գործունէութեանը և տղբախրութեանը վրայ վստահացած: Սա նաևանդ Ըղանեան Վսեմ. Ստեփան Պէլէն կը յուսանք որ ինչպէս Գործադիր Հանձնաժողովը Ըտեհապետ ըլլալով, ամէն խոչընդոտներու դէմ Սահմանադրութեան գործադրութիւնը յառաջ վարեց, և ի գլուխ հանեց. նոյնպէս Բաղաքական Ժողովը Ըտեհապետութեան պաշտօնին ալ կոչուած ըլլալով իր անուան և յարատեւող ջանասիրութեանէն կըրպասենք ազգային գործոց բարւոք տնօրէնութիւններ, ազգային յառաջդիմութեան ի նպաստ միջոցներ, արհացութեամբ Բաղաքական Ժողովը Սեճապատիւ անդամոց:

Սահմանադրութեան 89 երրորդ Եօդուածը կըրէ թէ. Բնդհանուր Ժողով գումարուէլէն գտնէ Վեց օր առաջ պէտք է որ Պատրիարքարանի կողմէն հրաւիրանաց գրեր յուղարի ունին անդամներուն:

Երկրորդ Բնդհանուր Ժողովին համար քանի որ յառաջ հրաւիրանաց գրեր գրուեցան: Սեղի անանկ կը թուի թէ Սահմ. այս յօդուածին ճիշդ գործադրութիւնը չլրացան համար է որ մեծապէս մաս ալ չգտնուեցաւ: Սահմանադրութեան մէջ հարկաւ պարտադրեալ չէ նշանակուած այդ յօդուածը: Սենք ասանկ բացառութիւններու ներքէ սիրող ենք, Ըղբին օգուտը մեծարելով ամէն բանէ առաւել. բայց երբ ասոնցմէ աւելի դիւրամտութիւն կէտերու մէջ ուրիշներու աններդրութիւնը տեսներ, մենք ալ այս ու ասոր նման Սահմանադրութեան դէմ գործուած կէտեր հրատարակելէ չենք դադարիք:

Մոյցեալ շարաթ. հոկտ. 5, Եկեղեցական Համագումար Ժողով կազմուեցաւ, Սահմանադրութեան 2^ր. յօդուածին համեմատ Պատրիարքոց Լազիսկոպոսայ Բնորեւեաց ցուցակ մը պատրաստուելու համար:

Համագումար Ժողովը ընտրեց թուրքաս.

տանի բոլոր Լազիսկոպոսայ մէջէն անոնք որ Օսմանեան Տէրութեան հպատակ են, և երեսուն և հինգ տարին լրացուցած, և ի վազուց անտի Պատրիարքութեան յատկացեալ Լազիսկոպոսայ դասէն են, այսինքն Լազիսկոպոսայ դասէն են, և գաղտնի քուէտրիւթեամբ հետեւեալ ընտրելեաց ցուցակը պատրաստեց,

Բեհաստու Լազիսկոպոս Վանայ	Գուէ 26
Պօզոս Լազիսկոպոս Չմիւսնից	" 24
Սարգիս Լազիս" հրամարեալ Պատրք"	" 20
Թադէոս Լազիսկոպոս Թէքիրապոլի	" 20
Երիտասկէս Լազիսկոպոս Խարնէի	" 12
Սկրտիչ Լազիսկոպոս Գաղաթից	" 12
Ստեփաննոս Լազիս" Կիլիսիացի Տեղ"	" 11
Յակոբ Լազիսկոպոս Եզգսից	" 8
Գեորգ Լազիսկոպոս Պրուսայու	" 7
Գեորգ Լազիսկոպոս Սարղուանու	" 5
Յակոբ Լազիսկոպոս Կեսարից	" 5
Կարապետ Լազիսկոպոս Սեբաստից	" 4
Յարութիւն Լազիսկոպոս Կարնից	" 3
Կարապետ Լազիսկոպոս Կեսարացի	" 3
Յովհաննէս Լազիսկոպոս Կապուտիկեան	" 3
Սահակ Լազիսկոպոս Ս. Երուսաղէմի	" 2
Երիտասկէս Լազիսկոպոս Խարբերդի	" 1
Յակոբ Լազիսկոպոս Ս. Երուսաղէմի	" 1

Հետեւաբար այս ցուցակէն դուրս մնացած Լազիսկոպոսներէն պատրիարք չլինի ընտրուի այս անգամ, Սահմանադրութեան 2^ր. յօդուածին համեմատ:

Ըղբային Լրեւսիտանական Ժողովը առաջին նիստին մէջ առժամանակեայ Վարչութեան Խառն Ժողովը Ըտեհապետ Սեճապատիւ Կարապետի Կարնիակ Պէլք հետեւեալ ճառը կարդաց:

Գերազանց Սրբազան Հայր և մեծապատիւ Տէրք անդամք Ըղբային Ընդհանուր պատկառելի Ժողովոյ: Ըղբին անիշխանութեան գծուակ ժամանակին մէջ ազգային ներքին և արտաքին գործերը տնօրէնելու համար Բ. Գ. Երան հրամանաւ Սրբազան Տէրապաշտի նախադրման թեամբ առժամանակեայ Խառն Ժողովը հաստատուեցաւ, որուն կողմէն պաշտօնին մէջ թէ և անձեռնհաս անորձանաբար անդամք սահմանուեցան:

Այս այն ժողովը հաստատուած օրէնք ինչոյն ազգի ընդհանրութիւնը նշանդէ կը փոփոքէր որ ազգային Սահմանադրութիւնը ժամ առաջ վաւերացուի. և մինչդեռ մէկ կողմէն իբրև Հայ օրինաւոր Վարչութիւն կը ինտուէր, միւս կողմէն ալ իբրև պաշտօնակալ այս փոխուի և ծանր պաշտօնին պատասխանատուութեան թեւէն սղասելու անհամբեր էր պատասխանատուութիւն մը առ Ըղբին, և որ աւելի մեծ է առ Բ. Գուռնի որ քանի երթար պիտի ծանրանար, նիտուով որ այն դժուար պարագայից մէջ Ըղբային Պատրիարքարանը դրամական նպաստէ որ ամէն կառավարութեան առաջին շարժիչ է գրեթէ զուրկ էր:

Խառն Ժողովը, իրաւ է որ իր ձեռքը Սահմանադրութեան օրէնքը չունէր, բայց սրովհետեւ յոյս ունէր որ առ յարապի վեհախառ Ապստոլ շարժելը զայն պիտի ստանայ, միշտ կաշխատէր թիչ շատ անոր խնամակէն չզնչով ընթանալ այն բաներու մէջ որ կարելիութիւն կը տեսներ: Խառն Ժողովը իրեն սկզբունքունքով եր Ժողովորէան մեծապէս մասին կամքը կատարել թէ որ իրաւացի դասեր, ամէն գործ խորազորար ոգուի և համոզական դրութեամբ կատարել թէ որ հնարին ըլլալ, ապա թէ ոչ իրաւունքը Բ. Գրան ուժովը հաստատուելու ստիպուած էր:

Խառն ժողովը միշտ ջանաց որ և իցէ մէկու մը արգիսն պարտւր անհար ընէ շոյց, և մասձեց որ Եթէ արգային յառաջագոյն թեան հասցն օգտակար չարտի կրնայ ըլլալ իւր ձեռքը ունեցած միջոցներով, դո՛ւն արգային թէ կրճտահարն և թէ բազմակիս գործերը արագութեամբ կատարէ, այնպէս որ օրինաւոր Վարչութեան մէջ բեռ մը չձգէ անդային համար, որով կարող ըլլայ ներկան հոգարը և ստղանին աւանց մաստանդութեան յարգարելու:

Ուստի Խառն ժողովը կը խոստովանի որ Եթէ արքէ նկատ մասը օգտակար եղած չէ, Վարչին ալ հին հոգ մը ձգած չէ, և սն գործերը որոց թիւը գրեթէ 5000 ի կը հասնի, բոլորն ալ կը օրով տեսնուած վճարուած են:

Հարկու այս բազմութիւն անօրէնութեանց մէջ սպառնակող ատկութիւն պաշտօնեկց օժանդակութեամբը միայն եղած գործը մէջ թերութիւններ ալ կը պատահին, թերութիւններ որ ոչ զանդազութեան և ոչ անիրաւութեան արգիւնքն են, այլ կը խոստովանին որ միայն շատ անգամ հասուն խորհրուածութեան ժամանակ չգտնելուս համար էր, և այս պատճառաւ ալ Խառն ժողովը այս արգային երեսփոխանական պատկառելի Վարչանուր ժողովէն ներքաճառութեան կը խնդրէ իր բեւ վարձատրութիւն:

20 սեպտ. 1865:

Խառն ժողովը այս համառօտ անդեկազմով Վարչին տարաւամ վիճակին մէջ Վարչին մատուցած ծառայութեանց փոխարէն իբրև վարձատրութիւն, Վարչային Մեղահանուր ժողովէն ներողամտութիւն կը խնդրէ իր այն թերութեանց համար, որոնք ոչ դանդաղութեան և ոչ անիրաւութեան արգիւնքն եղած են, այլ հասուն խորհրդածութեան ժամանակ չգտնելուս համար անոնք ալ պատահած են: Խառն ժողովը այս համառօտ Տեղեկագիրը մեր հանդիսին միջոցաւ ևս հրատարակել փութալով, վարչեան մը չէնք վարանիր շորհալալ ըլլալու Խառն ժողովը, և մանաւանդ մեծապատիւ Մտեհապետ Պէլին, որ անձանձիր փութալով, ըստ ձեռնհասութեան իւրոց, դժուար պարագայից մէջ յաջողեցաւ 3000 ի մօտ գործերու կարգադրութիւնը անօրինել: Վարչին համար անձուներ աշխատող անձինք այն չափ հաղաւաղուա են հիմայ, որ խղճմտանայ դէմ գործած կ'ըլլանք, եթէ զանանք այս շնորհակալութեան պարտքը հասուցանել Խառն ժողովը, և մանաւանդ Մեծապատիւ Բարունակ պէլին:

Սակայն թէ Վարչը, թէ Խառն ժողովը, և թէ մէկը ամէկըս բարեմտազմէնք որ Խոսուած մէյմ'ալ ոչ այնպիսի երկամեայ տարաւամ աղքային ընթացք ցուցնել մեզն և ոչ Խառն ժողովը պէտք:

Կ. Պոլսը մէջ Տարր Գրիւնը Գրտարուիւնը:

Վերջին օրերս զգալի եղաւ թէ մարդ կամ աղքային պաշտօնեայ մեր Վարչին մէջ որչափ հաղաւաղուա եղած են:

Սեր սրտին ցաւէն այս յօդուածը կը գրենք, և ոչ թէ յուսահատութեան: Խորհելով թէ դո՛ւն մերթ ընդ մերթ ալ ճշմարտութիւնը աւելի մերկայարանոց յայտնելու ըլլանք, գուցէ օգտակար կրնանք ըլլալ:

Վարչը իր էն ընտիր անդամներէն կազմեց Վարչային երեսփոխանական ժողովը. բայց ինչու առաջին անգամ 19 անձինք և երկրորդ անգամ 47 անձինք ներկայ չգտնուեցան . . . :

Մանաւանդ երկրորդ անգամին ներկայ չգրանըւողներուն մէջ այնպիսի անձինք կան, որոնք խիստ ծանր դրազմուէր ալ ունենային, դարձեալ Մեղահանուր ժողովն ներկայ չգտնուիլ անոնց համար անյուսալի էր, մանաւանդ հիմա որ ամէն մէկ նիստի խիստ կարեւոր գործերու անօրէնութիւններ ըլլալու ժամանակ է: Մէկը երեսփոխան ըլլալու դժուարագիւա պատիւն ունենայ, ու ժողովն ներկայ չգտնուի զարմանալի բան: Սոկէ սալաւալի հետեանքը կ'երնէ թէ Վարչը ցարդ զերեկը ճանչցած ըլլալու չէ, որ լոկ անոնց համբաւին ետեւէն ընթացեր, ու կար զկուրացն բուէ տուեր և ընտրեր է զերեկը:

Մերօգամտութիւն կը խնդրենք մեր այս խիստ խօսքերուն համար, Վարչը այնպիսի նեղ ու դժուարին պարագայից մէջ կը գտնուի, որ իր ընտրած երեսփոխաններուն դեռ աս պարտղին գլուխը ցուցրած այս անտարբերութեանը վրայ իրաւունք կ'ընտանայ վերաւորուելու, և մինչև անգամ յուսահատուլու:

Սոկէս Բաղարաւան ժողովը անդամները կ'ընտրուին, ընտրուածներուն մէջէն հրաժարականին կուտան անոնք, որ կամ իրենց արժանիքովը, կամ խոհակաճութեամբը կամ գործունեութեամբը ժողովոյն մէջ խիստ կարեւորութիւն ունին:

Մահմանադրութիւնը ըլծիւք կ'ըստաուներ. անհաւաստի շորհուեցաւ մեզն բարելինամ կատարութեանէն. Մահմանադրութի կ'ուղէինք, անոր համար որ զայն գործադրելու մարդ ունինք Վարչին մէջ. երբ Վարչին յոյսն ու վստահութիւնը ստացող անձինք ատարբեղէն փախուստ տալու երես բանն գործի ժամանակ, հասցա Մահմանադրութիւնը ո՞վ պիտի գործադրէ. ծալե՞նք մէկի դրնենք. Մահմանադրութիւնը ինքնին չգործադրուիր, մարդ պէտք է, գործող ձեռք կուղէ: Վարչին մնայ նէ, ան շուտով իր ընեղքը կորոչէ. բայց Մեղահանուր ժողովը չէնք կարծեր որ իր անտարբեր անդամոց վրայ անտարբեր մնայ:

Փորձը մեզն շատ խրատներ և շատ դասեր պիտի տայ. պիտի ճանչցուի թէ ո՞վ է ճշմարիտ աղքատերը, ազգասէր է՞ ըստող, թէ գլուխը կատող և իր պաշտօնը շարունակողը. թէ գործունեայ ճանչցուածներէն որո՞նք անհոգ են, և անհոգ ճանչցուածներէն որո՞նք գործունեայ: Վարչն ալ զաստը կը դիտէ, և երկրորդ ընտրութեան մէջ իր վիսպակները փորձառութեամբ ուղղել կը փութայ հարկաւ:

Սակայն կը յուսանք որ թէ Մեղահանուր ժողովը և թէ Բաղարաւան ժողովը Մեծապատիւ անդամք աներկիւղ և վստահ իրենց յանձնուած փախուկ պաշտօնները վարելով, Վարչին խորին երախտագիտութեանը, սիրոյն և համահրութեանը աւելի ևս կ'արժանանան:

Բարձեալհասարակութեան արդէն ծանօթ է որ Օկթուրի դժբաղդ դէպքին քննութեանը

համար ի Մարտչ յատուկ Զանձնաժողով մ'ըլլալ սահմանուած է, և մեր Ազգին կողմանէ ալ ընտրուած է Ազգաբեկեան Մարգիս աղան՝ անդամ նոյն Զանձնաժողովին: Արիւամիս է որ Մարգիս աղան Աշխարհիկ իր գործերուն գացած է, և աագիւն գործը երեսի վրայ մնացած: Օէյթուռէն հասած լաւերը խիստ ցաւալի են, և սղտոր ջուրի մէջ ձուկ որսալու բնաւորութիւն ունեցող Հառակա դաւան բարոյիչներ այցելութիւն ընել սխեր են Օէյթուռի, և անոնց խոսամուտները ըրեր են, եթէ Օէյթուռնցիք ալ խոստանան Հ. ու մէտդաւան ըլլալու:

Եթէ Ազգաբեկեան Մարգիս աղան անձնական գործ և զբարմուտք ունի, ինչո՞ւ ուրիշ մ'անոր տեղը չընտրուիր. ասանկ գործի համար ալ մարդ կը պահիս: Եթէ անձնական ըզբաղմունքէ զերծ աշխարհական չի կայ, եկեղեցական ալ կը պահիս միթէ, մանաւանդ այդպիսի փափուկ խնդրոյ համար: Միայն Բաղդէրէն լեզուի հմուտութիւնը խելք, հանձար, քաղաքագիտութիւն չիտար մարդուս, փորձառութիւնը, խոհանարութիւնը և Տէրութեան օրինաց լաւ հմուտութիւնը աւելի կարեւոր հանգամանքներ են ասանկ խնդրոյ մէջ մտնող անձի. և միթէ Ազգը ուղէ, ճիւղնար այնպիսի եկեղեցական կամ աշխարհական մէկը գտնել: Ինչ որ է, ասանք մեր կարծիքներն են, Ազգային ժողովները հարկաւ մեզմէ ուղէկ պիտի խորհին. ի վերայ այսր ամենայնի մենք ալ մեր կարծեաց մէջ կէտեր ունինք, որոնց համար իրաւունք կրնանք մեզի սեպհականել ըսելու թէ ասանկ փափուկ խնդրոյ համար բարձրատիրձան, խոհեմ, Տէրութեան և Ազգին համարմանն արժանաւոր եկեղեցական մը խրկուի աւելի աղէկ կ'ըլլայ, մանաւանդ որ այս աւթով նոյն կողմերու ժողովուրդն ալ հոգև որտախ կը միխթարուի, բանիբուն եկեղեցականի մը բարոյները ու հայրական խրատները ընելու, որոնց աւելի պէտք ու կարոտութիւն ունի. . . :

Սերիշ խնդիր մ'ալ կայ, որուն համար ալ արժանաւոր մարդ գտնելու դժուարութեանը մէջ պիտի խնայնք կարծեօք:

Այսօր Բնդհանուր ժողով կայ Ազգային Պատրիարքարանը, Պատրիարքի ընտրութեանը համար: Իգևափաս և Պօղոս Այսիակոյտոսոյ վրայ խօսք կը պարոյի. և հաւանականագոյն է որ այս երկուքէն մէկը, կամ գուցէ ուրիշ երրորդ մը ընտրուի. անիկա բուէին գիտնալու բանն է: Աեզի կը թուի թէ վերջիչեալ Սրբազաններէն մէկը այսօր Պատրիարք է. որն ըլլալը չեմք գիտեր, վասն զի երկուքին ալ կուտակից երեսփոխաններն անգամ քուէհամարէն վերջը պիտի գիտնան ընտրելին: Ըստ մեզ երկուքն ալ իրենց յատուկ բարեմանութեամբ Ազգին օգտակար կրնան ըլլալ, մէկը իր պատուական ծերութեամբը, պատկառելի ընթացքովը և խոհականութեամբ

բը, և միւսը իր ենանդուն բնաւորութեամբը և գործունէութեամբը:

Արիւքին ալ յատուկութիւնները անանկ են որ, եթէ կարելի ըլլար, երկուքն ալ Պատրիարք, կամ մէկը Պատրիարք, միւսը խորհրդական (Գ-սիւշը) ընտրուէին նէ աղէկ կ'ըլլայ ըսել կուտայ մեզի. վասն զի խոհական և պատկառելի անձ, եւ անդուն և գործունէաց անձ միանգամայն պէտք են. երկուքն ալ հասակի արդիւնք են, թէ պէտ մէկը միւսը կարելի է որ ունենայ: Ինչ որ է, մենք ասոնց կամ ուրիշ ընտրելի վրայ դատաստան ընելու դիտաւորութիւն չունինք. և ոչ ալ Պատրիարքցու ի արժանաւորութեանը վրայ կ'ուղենք խօսիլ, վասն զի Ազգին ներկայ վիճակին նկատմամբ Պատրիարքցուի համար կարեւոր եղած և պահանջուած յատուկութիւնները ամբողջ ունեցող եկեղեցական գտնել դժուարին է. բաց յարմարագոյններուն մէջ ալ կը փոփոքինք որ անանկ մէկն ըլլայ, որ ամէն ձայնի գլուխ ձուէ շուտով, աշառութիւն չընէ, կամ ընէ ալ քիչ ընէ, մէկ երկու գլուխներու չկապուի չմնայ, քիչ մ'ալ Ազգին մոխի ընէ. Ակեղեցւոյ պայծառութիւնը, եկեղեցականաց վիճակի բարեգրութիւնը և դպրոցաց յառաջդիմութիւնը են հոգարու սէր ու ջանք ունենայ:

Սն է մեր գիտողութիւնը թէ, Պօղոս Սրբազանը ինչպէս ուրիշ անգամ Պատրիարքի ընտրութեան ժամանակ հրաժարականը խըրկած է, այս անգամալ իր հրաժարականը կրնանո՞ւծ է. և այնպիսի կերպով որ ոչ որ կրնայ կատկածիլ թէ առ երեսու եղած ըլլայ:

Արդ Պօղոս Սրբազանը եթէ այսօրուան ընտրութիւնը շահի, ինչ պիտի ընէ. դէմ պիտի կրնայ դնել բոլոր Ազգին կամայը, պիտի կրնայ ճողպարիլ, կամ ինչ պայմաններով պիտի ընդունի: Եթէ Բաղաքական ժողովոյ մէկ երկու անդամաց նման առժամանակեայ՝ մէկ երկու ամուտան համար ընդունի, մէկ երկու ամիսէն վերտախն պիտի պարտաւորինք մարդ, պատրիարքցու փնտուելու. և ան ատեն իրաւացի չ'պիտի ըլլայ մեր ըսածը թէ՛ մարդ գլուխելու դժուարութեանը պատահեր ենք. հապտ թէ որ Պօղոս Սրբազանը պնդէ իր հրաժարականին վրայ, չտեսնուած բան մը պիտի ըլլայ, և Պատմութեան մէջ անցնելու արժանաւոր... Արեւփոխանական ժողովն ալ մեզի նման պիտի վարանի ան ատեն մարդ գտնելու դժուարութեանը մէջ: Աստուած տայ որ ասանկ չըլլայ:

ԽՐԹՈՒՆՆ ԵՒ ՄԷՃՄՈՒՆ

Թէ Սեճմուս ինչ վերաբերութիւն ունի Խրթուանի հետ, և թէ ինչո՞ւ Սեճմուս հին վերերը բանալ կը խոր յէ: Բանի մը խօսք մեր Ազգին ընթացիկ վրայ:

(Շարունակութիւն գես թիւ 20. և վերջ)

Սեճմուսն ինք ալ կը ցաւի որ նոր բացուած վեճին խրթմեան եղաւ առարկայ, ըսել

է ուրիշ ցաւեր կան Մէծմուային բով, զա-
նանք բուժելու համար խրիմեանէն սկիզբը Ը-
բու, բայց հան ճննոց, անցու Սահմանադրուէ
վրայ, Սահմանադրական վարչութեան վրայ,
և դեռ նոր ճանապարհ երևելիք Վարչութեան
վրայ ոչ ուղղակի, այլ անուղղակի ազդեցու-
թիւն մը բանեցնելով, գրգռել Սասնան ու
միւս օրագիրները, անոնց առջև դնելով ի-
րենց հին գործերը, որպէս զի անանք ալ եթէ
անզգուշութեամբ ինքզինքնին պաշտպանել
նկրտելով հին գեղքերուն վրայ հայեցումը
մ'ընեն, նորէն ասոր անոր սիրտերը վերա-
ւորեն, և կիրքերը դառնայնելով, նոր վէճի
գուռ բացուի, և խողովութեան յայտը ջն-
ջուի: յուսահատութիւն, լքում զամէնքը
պաշարեն: Պատրիարքարան տակն ու վրայ Ը-
լայ, ազգայինք վէճն ուսից ծագեցաւ և ուր կ-
յոյսը չբխանալով և իրաւու միտք չհասկնալով
յուզին, ժողովուրդը գրգռուլ կուսակցու-
թիւնները և թողական վէճերը զօրանան,
Պատրիարքարանը խաղաղի ըլլայ անոնց, գա-
ւառները շիտթին, գաւառարնակ ազգայինք
բողբոջին վճարին, և յուսահատ ամէն օգ-
նութեան և բարեկարգութեան միջոցներէ
որիչը դուրս գարնէն . . . :

Մենք Մէծմուան իր այս ընթացքին հա-
մար պարտաւել բնաւ մտքերնէս անգամ չենք
անցըներ: Մէծմուան իբրև Հռովմէական իր
պարտքը կը կատարէ, և երանի թէ իրմէ օրի-
նակ առնելիք, մենք ու մերոնք ալ մեր շահե-
քը անոր նման պաշտպանել գիտնայինք:

Վերջը բացայայտ խօսելով մենք տակաւին
համոզուած չենք կրօնքն ուրիշ ազգութիւնն
ուրիշ սկզբանք, մենք տակաւին համոզուած
չենք միութեան խնդրոյն: միութիւն ինչ Ը-
սել է. թէ որ մեզմէ բաժնուած եղբայրները
գան մեզի միանան, կ'ըլլայ միութիւն, մեր
Վրբին դիրքն ու վիճակը նկատելով՝ ազգային
միութիւնը առանց կրօնական սկզբանց միութե
դժուարին է, սուտ յոյս է (գժբազդաբար) և
աւելի մեզի համար փնտ է: Ուրեմն Մէծմուան
ինչ իրաւունք ունի մեր ազգային ներքին գոր-
ծոց ալ միջամտութիւն բնելու, երբ մեզնէ
բաժնուած եղբայրներէն է, և գիտէ ալ որ
մեր Վրբային Սահմանադրութիւնն իրենց
համար ալ չէ. եթէ մեր Սահմանադրութիւնը
գեշ և փտանգուոր և Սահմանադրական վար-
չութիւնն ալ ակար կամ պակասաւոր ըլլայ,
իրենց համար աւելի շահ է. բայց երբ ընդ
հակառակն է, հարկաւ իրենց համար փնտ
է, ու անանկ պիտի ըլլայ: Սակայն եթէ կու-
զէ իբրև Հռովմէական մը միջամտութիւն Ը-

նել այս խնդիրներուն մէջ. իր խրատներն ալ
յորդորներն ալ անօգուտ են, ականջնիս պիտի
գոցենք, զգայ պիտի կե՛նանք, վասն զի հերիք
է նրաւ մինչև ցարդ խաբուեցանք: Մէճ
մուայի հմտալից գրէնք քաղաքագիտական և
ուսումնական դասեր և խրատներ կ'ըստասենք,
և զանոնք ուշագրութեամբ կը կարդանք, բայց
ազգային դասի համար իր պատուական թեր-
թին մէջ անզ չկորսնցնէ նէ՛ աղէկ կ'ընէ:

Վերջը քսինք թէ Մէծմուայի վրայ չենք
ցաւիր. ան իր պարտքը կը կատարէ. բայց
կը ցաւինք տկարամիտ մերայնոց անանց վրայ,
որոնք չեն գիտեր թէ Վրբն ո՛ւր է, և իրենք
ու՛ր: Քանի քանի անգամ դառնութեամբ
խօսած եմք թէ Վրբն աննպատակ ընթացք
մ'ունի, և ասոր պատճառ առաջնորդող գա-
ղափարներու անհամաձայնութիւնն է: Վրբն
անանկ զօրուոր դիրք մը չաւնի, որ դաղու-
փարներու ընդդիմահարութեանց հետեանք
ներու տակաւ չափ կարողանայ: Ար է Վը-
րոյա, մենք ո՛ւր ենք, շատ անգամ լած ենք
թէ Վըրոյա ալ անանկ կ'ընէ, Վըրոյա ալ
այս բանս ասանկ է. բայց Վըրոյային հետ
բազմատու թեան մաներու վիճակին մէջն ենք,
4-500 տարի առաջ եղած Վըրոյային քննն ան-
գամ երթալու կարծենք պիտի ամջնանք: Սա-
կայն դիցուք թէ Վըրոյայի այսօրուան վիճա-
կէն օրինակ առնելու ջանք մ'ունենալու պար-
տական եղած ըլլանք, դիտելով կը տեսնենք
թէ Վըրոյայի էն լուսաւորեալ ազգերը՝ ո-
րոնք նիւթական, բարոյական և մտաւորական
ամէն ոյժ ունին, և այսօր միխնաւոր բնա-
կիչներու իշխող և ընդհանուր աշխարհի վրայ
բարոյապէս տիրող են, սուսմանց և գիտու-
թեանց, ճարտարութեանց, արուեստից և
վաճառականութեան ղեկիթն հասած են, ա-
սանք դարձեալ մեզի չափ ապաստիք չեն:

Մեր խօսքը հեզնութիւն մը չկարծուելու
համար կ'ըշտասենք զայն բացատրելու:

Կրօնական ազատութիւնը վերջին ծայր
կը յարգուի այսօր Վըրոյայի լուսաւորեալ
ազգաց մէջ, սակայն ինչո՞ւ, չեմք գիտեր, օ-
րէնք գրուած է Վնգլիայ արքունիքը Վրբիսկա-
պտական եկեղեցիէն ըլլալու, ինչո՞ւ Հելլա-
նայիք, որ փոքրիկ թագաւորութիւն մ'են
թէպէտ, սակայն իրենց նորնախիթ թագաւո-
րին վրայ օրէնք կը դնեն որ իրենց ազգային
եկեղեցւոյ դաւանութիւնը ընդունի: Ինչ-
չու Վաղղիա, Վնգլիա, Վնեթիկա մեծ ջանք
ունին ոչ այնչափ Քրիստոնէութիւն քարոզե-
լու, որչափ իրենց գաւանակիցները շտայը-
նելու. ինչ զօրութիւն կամ ինչ շահ կայ, որ
այդ լուսաւորեալ ազգերը կ'ըտանան իրենց

դաւանակիցները շատցնելով . Ամերիկացւոց քարոզութիւնները լսող և անոնց հետևողները ինչէն է որ անոնց հետ ներքին համադրմ մը և սերտ համակրութիւն մը կ'ըստանան . ասանկ են նաև Հասկիական և Մագդիացի քարոզաց հետևողներն ալ : Այդ ա մեհադորաւոր , հզոր , լուսաւորեալ , և գրեթէ բանի մը կարօտ չեղող ազգերը կ'ուզեն օգուտ քաղել օտարներու իրենց վրայ համա կրական ցոյցէն , և իրենց գաղափարին տարածուելէն , կրօնական քարոզութեանց շնորհիւ : Ինչո՞ւ Աւերուպացի ազգաց վրայ կը խօսինք , մենք մեզի աւելի մերձաւորն ունինք , մեզմէ բաժնուած եղբայրներ , Հասկիական և Մագդիական , ասանք ոչ նուազ գործունէութեամբ կը վարուին , և մեզմէ շարունակ գողնալ կը նկրտին . . . ասանք որ այսչափ ժիր ու արթուն ըլլան , մենք ինչո՞ւ պիտի քնանանք . ասանք ինքզինքնին դորացնելու համար իրենց Եկեղեցւոյն ժողովուրդը շատցնելու ոգևոլ չափ նկրտած աստենին , մեզմէ պահուած պիտի մնայ միայն այն կատարեալ ազատամուտութիւնը , որով անհագ , անտարբեր մնանք մեր հօտին մեր եղբայրներուն վրայ . . . :

Այդ Աւերուպացի մէջ անգամ երբ կրօնական շահերը մեկզի թողուած չեն , և երբ անոր հզոր քարոզականութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին , հապա որչափ մեզմէ համար , տկար և ամէն բանի կարօտ Ազգի մը համար , մեզի համար , որ Արօնիով սպրած և հասած ենք այս աւուր կենդանութեանը , և կրօնքի համար թափած արևունիս միայն մեր ճակատին պարծանաց պսակ ըլլալու միջոցն ունինք մեր Ազգային Պատմութեան մէջ . Ասով միայն մը խիթարուած , զօրացած , քաջալերուած և հիմա ալ Ասով միայն վստահ կը ներկայանանք լուսաւորեա աշխարհին , համակրութիւն սպասելու անկէ : Ուր հեռուն կ'երթանք , այսօր Ազգ ենք Արօնիով կրօնական հասարակութիւն մը կը ճանցուինք մեր բարեխնամ Առաւորութեան առջև . շնորհուած է մեզի այնպիսի ազգային արածութիւններ , որոնք Արօնքին հետ առնչութիւն ունին . առանց կրօնից այն արածութիւնները կրնանք վայելել արդեօք . . . հապա ինչպէս դիւրաւ և աժան կրնանք ծախելու եղնել մեր հին ու նոր պարծանքն եղող և մեր Ազգութիւնը պահող , և հիմակուան վիճակնուս մէջ ալ մեր Ազգութիւնը ճանցնող և ապահովող միջոցը : Սեր Հայաստանեաց Եկեղեցին որ 1800 ասրիէի վեր իր ուղղափառութիւնը պահած է , և Արևելեան ու Արևմտեան հարիւրաւոր միլիոն ժողովուրդ ունեցող բրիտանացի Եկեղեցւոց մէջ իր անարատութիւնը դարձեալ պահած է , և մենք անոր հարազատ որդիք ալ զայն պաշտած ենք ցարդ , և որ յուզեալ և փոթորկալից ժամանակիս մէջ մեզմէ միակ անբոյժ ապստամբարան է ու պիտի ըլլայ , կրնանք դիւրաւ և անյողողը յայտնել թո՞

ղուլլեքանել . բաւ լիցի :

Ահա ասոր համար է որ ցաւած սրտով կը կրկնենք և կ'երեքինենք թէ աննպատակ ընթացք մ'ունինք . ուր կ'երթանք յայտնի չէ . առօրեայ յոյսեր , խաբուսիկ և կեղծ ակնկալութիւններ մեր մէջէն այնպիսի սրտեր կը դուրս երբեմն , որ կը պարտաւորինք լալ և արատաւել անոնց վրայ : Ասոր համար է որ մենք այնչափ ազատամիտ երևցած չենք և երևալ ալ չենք ուզեր . անստոյգ վիճակէ և աննպատակ ընթացքէ խորշոյլ ենք , և Ազգին անհասկ ճանապարհը կ'որոնենք , բան ուրիշ բան : Իմ դիմացինս զիս որսալ կամ զիս տկարացնել խորհած ժամանակը , եթէ անհագ կենալու չափ ազատամիտ ըլլամ , տկար կամ ազէտ ըլլալէ տարբերութիւն մ'ունեցած չեմ ըլլար : Թերևս բող ըլլայ թէ՛ խաբութիւնները վերցնելով , միանալը աղէկ բան է , մենք ալ համամիտ ենք ասոր , բայց երբ . երբ դիմացինս ալ նոյն բանը ընէ և ուզէ : Աւերուպացի ամէն որ փոփոխութեան ենթակոյ եղած քաղաքականութեանէն այս դասը կ'արձենք , ապա թէ ոչ միայն իմ ազատամուտութիւնս տկարութեան և տգիտութեան արդիւնք կը սեպուի : Ամէն անգամ որ միութեան խնդիր բացուած է , միշտ մենք վրայ տուած ենք . երբ ընդհակառակը մեր եկեղեցին իր բն մայր և ճնող և իբրև 1800 տարուան Բրիտանոսի հաստատուն հիման վրայ կառուցուած եկեղեցի պէտք է պատրաստուի իր ծոցը ժողովուրդ իր մէ խորթացած և բաժնուած զաւակները : Այս թեան խնդիրը միշտ անյուսալի ընող այնպիսի շահեր կը նկատենք , որ երբեք այդ խնդրոյն լուծում չենք կրնար ակնկալել , հետեւաբար լալ է որ մենք մեր դռները գոց պահենք մերիններուն համար , և բանանք անոնց որ մեզմէ էին երբեմն , և հիմա չըլլալով ուզեն դարձեալ մեզմէ ըլլալ :

Ալ ինչ կ'ուզէ թող բաէ , մեր բաժններուն իրաւացի ըլլալը անցեալը կ'ապացուցանէ , իսկ ապագան պիտի ապահովեն . աղէկ է որ մենք մեր դռները գոցենք , Անճաման ալ աստեօք այս խորատը տուած է մեզի . . . և լի Ազգին նիւթեան , մտաւորական և բարոյական յառաջ դիմութիւնը հոգանք . պարփակեալ և ծոց Իւստաւորչական Ազգային ուղղափառ Եկեղեցւոց մերոյ ընդ բահանայապետական իշխանութեամբ Սրբազնահատար Կաթողիկոսի Ս . Լ . Չմիածնի , և ընդ հովանաւորութեամբ հայրական խնամոց Օգոստոսիան Սուրբանին , որուն բարեխնամ կառավարութեան շնորհիւ կը յուսոցորի մեզի ազգային յառաջիմութիւն և ապագայ բարօրութիւն ի ձեռն Սահմանադրական Ազգային Վարչութեան , և խրբիմեանի նման ազգասէր Հարց քրտնաթոր վաստակոց :